ՆԱԽԱԳԻԾ 39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » « » N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 300 ՄԼՆ ԴՐԱՄԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 13 աղյուսակում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման N 5 հավելվածի N 12 աղյուսակում կատարել փոփոխություններ համաձայն համապատասխանաբար NN 1 և 2 հավելվածների:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների) հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ շինարարության կամ հիմնանորոգման աշխատանքների 300 մլն դրամից ոչ պակաս նախահաշվային արժեք ունեցող օբյեկտների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

Հ. Թովմասյան

Հավելված N 1

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 13 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամներով)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծրագրի N	ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	Ցուցանիշների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)			
բաժին	խումբ	դաս				Շենքերի և շինությունների շինարարություն	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	Նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	Ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր
1	2	3	4	5	6	7	8	9	10
				ԸՆԴԱՄԵՆԸ **այդ թվում՝**	-	-	-	-	-
				<u>ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>	-		-	-	
				այդ թվում՝					
03	05	01	01	**Քրեակատարողական համակարգի պահպանում**	-				
				որից՝					
				ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք մշակող աշխատանքային խմբի աշխատանքային ծախսեր	**4 000,0**				
				<<Գորիս>> նոր քրեակատարողական հիմնարկի կառուցում	(1 000 000,0)	(1 000 000,0)	-	-	-
				<<Արմավիր>> նոր քրեակատարողական հիմնարկի կառուցում	996 000,0	996 000,0			

Հավելված N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամներով)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծրագրի N	ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
բաժին	խումբ	դաս			առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ		-	-	-
				այդ թվում՝				
				<u>ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>	-	-	-	-
				այդ թվում՝				
03	05	01	01	**Քրեակատարողական համակարգի պահպանում**	-	-	-	-
				որից՝				
				ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք մշակող աշխատանքային խմբի աշխատանքային ծախսեր		4 000,0	4 000,0	4 000,0
				«Գորիս» նոր քրեակատարողական հիմնարկի կառուցում	**(100 000,0)**	(400 000,0)	(700 000,0)	(1 000 000,0)
				«Արմավիր» նոր քրեակատարողական հիմնարկի կառուցում	**100 000,0**	400 000,0	700 000,0	996 000,0

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի N որոշման

ՑԱՆԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ԱՌԱՆՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ) ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 300 ՄԼՆ ԴՐԱՄԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

NN ը/կ	ՀՀ պետական մարմինների, ծրագրերի և օբյեկտներ անվանումները	Նախահաշվային արժեքը (հազ. դրամ)
1	2	3
	ԸՆԴԱՄԵՆԸ	
	որից՝	
1	**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**	
	այդ թվում՝	
1.1.	**Քրեակատարողական համակարգի պահպանում**	
	որից՝	
	«Արմավիր» քկ հիմնարկի կապիտալ շինարարություն	8,821,750.1

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 300 ՄԼՆ ԴՐԱՄԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը (այսուհետ՝ ՔԿ հիմնարկ) նախատեսած է 1240 դատապարտված անձանց պահելու համար; Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են 2007 թվականին, նույն թվականից էլ սկսվել է շինարարական աշխատանքները: Մինչև 2009 թվականի մարտ ամիսը ՔԿ հիմնարկում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- արտաքին պարիսպի կառուցում 1196.8 մ ^{3}
- ներքին արգելապատի հիմքի իրականացում 775.6 մ^3
- բոլոր մասնաշենքերի հիմքերի իրականացում 13 500 մ^3
- հիմքերի ջրամեկուսացում 26 400 մ^2
- տարածքի պլանավորում զրոյական մակարդակի 18 700 մ^2
- բոլոր մասնաշենքերի ցոկոլային հատվածի կառուցում 6 000 մ^3

ՔԿ հիմնարկի կառուցման և համապատասխան սարք-սարքավորումներով հագեցման համար 2007թ. նախագծա-նախահաշվային փաստաթղթերով անհրաժեշտ էր 8,322,0մլն դրամ, որից իրացվել է 2,587.2 մլն. դրամը, որից

-2006թ.	11.5 հա հողատարածքի ձեռք բերում	- 111,1 մլն. դր.
-2007թ.	նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	- 119,0 մլն. դր.
	կապիտալ շինարարություն	- 456,8 մլն. դր.
-2008թ.	կապիտալ շինարարություն	- 1,604,9 մլն. դր.
	հեղինակային հսկողություն	- 3,4 մլն. դր.
	տեխնիկական հսկողություն	- 32,0 մլն. դր.

-2009թ. նախատեսվել է կապիտալ շինարարություն 1,307.7մլն. դրամի, որից նույն տարում որպես կանխավճար վճարվել է 260.0 մլն. դրամ, իսկ մնացորդային գումարը ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի թիվ 302-Ն որոշմամբ ժամանակավորապես կասեցվել է:

ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ քաղաքաշինության նախարարության համապատասխան մասնագետների կատարած խոշորացված վերահաշվարկի հիման վրա՝ հաշվի առնելով գների բարձրացումը, հիմնարկի կապիտալ շինարարական աշխատանքների ավարտման և ինժիներատեխնիկական ու այլ սարքավորումներով հագեցման համար անհրաժեշտ կլինի 10.0 մլրդ. դրամ: Տվյալ արժեքն ամրագրված է նաև ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած նիստի թիվ 51 արձանագրային որոշմամբ, որն իր մեջ ներառում է մոտ 1.3 մլրդ. դրամի անհրաժեշտ գույք և սարքավորումներ, 1.6 մլրդ. դրամի ինժեներատեխնիկական միջոցներ, իսկ միայն կապիտալ շինարարության համար՝ մոտ 7,1մլրդ. դրամ:

ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար պարոն Կ. Կարապետյանի մասնակցությամբ վերանայված նախագծա-նախահաշվային աշխատանքների արդյունքում առաջարկվել է զուտ կապիտալ շինարարության համար նախատեսված մոտ 7.1մլրդ. դրամը կրճատել մոտ 634.2 հազ. դրամով, որի արդյունքում՝ միայն կապիտալ շինարարության ավարտման համար անհրաժեշտ կլինի մոտ 6,5 մլրդ դրամ:

ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման նպատակով 2011 թվականի պետական բյուջեում նախատեսված 1,000,000.0հազ. դրամ գումարից 996,000.0հազ. դրամը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցմանը ուղղելը պայմանավորված է նրանով, որ՝ չնայած երկու հիմնարկների կառուցումը ընդգրկված է քրեակատարողական համակարգի զարգացման գերակա ուղղությունների ցանկում, սակայն ելնելով այն հանգամանքից, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թվաքանակը 2007 թվականի 3083-ի փոխարեն այժմ աճել է մինչև 5287-ի և, որ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի նոր համալիրի կառուցումը առանց ինժեներատեխնիկական ու այլ սարքավորումներով հագեցման կարժենա 4.1 մլրդ դրամ, որտեղ պահվելու են մինչև 340 ազատազրկվածներ, առավել նպատակահարմար է ավարտել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցումը, որը կբերի քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկվածների թվաքանակի բեռնաթափմանը և կապահովի ցմահ

դատապարտված անձանց մեկտեղ և միջազգային չափանիշներին համապատասխան պահելուն:

Քանի որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը համարվում է ռազմավարական կառույց, որտեղ պահվելու են ցմահ դատապարտյալներ, ինչպես նաև ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և տվյալ գնումը այլ ընթացակարգով իրականացնելը ժամկետի առումով դարձել է անհնար և նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել՝ ուստի նպատակահարմար ենք գտնում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման աշխատանքների գնումը իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

Ներկայումս հրատապ անհրաժեշտություն է առաջացել հոգալու ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը մշակող աշխատանքային խմբի աշխատանքային ծախսերը, ուստի «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման նպատակով 2011 թվականի պետական բյուջեում նախատեսված 1,000,000.0հազ. դրամ գումարից 4,000.0հազ. դրամը նպատակահարմար է ուղղել այդ ծախսերի կատարմանը:

Կարգավորման բնույթը.

Նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշման մեջ:

Ակնկալվող արդյունք.

Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է իրականացնել նոր քրեակատարողական հիմնարկների կառուցման աշխատանքներ:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 300 ՄԼՆ ԴՐԱՄԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ շինարարության կամ հիմնանորոգման աշխատանքների 300 մլն դրամից ոչ պակաս նախահաշվային արժեք ունեցող օբյեկտների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, և այն համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 300 ՄԼՆ ԴՐԱՄԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ շինարարության կամ հիմնանորոգման աշխատանքների 300 մլն դրամից ոչ պակաս նախահաշվային արժեք ունեցող օբյեկտների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 300 ՄԼՆ ԴՐԱՄԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն /22.04.2011թ. 1/4.1-4/77881-11	Գտնում ենք անհրաժեշտ մեկ անգամ ևս քննարկել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 03 բաժնի 05 խմբի 01 դասի «01. Քրեակատարողական համակարգի պահպանում» ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցմանը նախատեսված 1,000,000.0 հազար դրամը ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարությանն ուղղելու նպատակահարմարությունը:	Չի Ընդունվել.	ՀՀ արդարադատության նախարարությունը քննարկել է խնդրի նպատակահարմարությունը: Նախագծով ներկայացված փոփոխության կատարումը համարում ենք անհրաժեշտ և նպատակահարմար: Հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 03 բաժնի 05 խմբի 01 դասի «01. Քրեակատարողական համակարգի պահպանում» ծրագրով «Գորիս» նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախատեսված 1,000,000.0 հազար դրամը «Արմավիր» նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմանն ուղղելը գտնում ենք նպատակահարմար, քանի որ

			<< արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման նպատակով 2011 թվականի պետական բյուջեում նախատեսված գումարները «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցմանը ուղղելը պայմանավորված է նրանով, որ՝ չնայած երկու հիմնարկների կառուցումը ընդգրկված է քրեակատարողական համակարգի զարգացման գերակա ուղղությունների ցանկում, սակայն ելնելով այն հանգամանքից, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թվաքանակը 2007 թվականի 3083-ի փոխարեն այժմ աճել է մինչև 5145-ի և, որ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի նոր համալիրի կառուցումը առանց ինժեներատեխնիկական ու այլ սարքավորումներով հագեցման կարժենա 4.1 մլրդ դրամ, որտեղ պահվելու են մինչև 340 ազատազրկվածներ, առավել նպատակահարմար է ավարտել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցումը, որը կբերի քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկվածների թվաքանակի բեռնաթափմանը և կապահովի ցմահ դատապարտված անձանց մեկտեղ և միջազգային չափանիշներին համապատասխան պահելուն: